

**Չարդ** Ի՞նչպես է իրականացվում օպերատիվ աշխատանքի կազմակերպումը:

**Պատասխան** Մատակարարը եւ սպառողը պարտավոր են յուրաքանչյուր տարի մինչեւ դեկտեմբերի 20-ը միմյանց ներկայացնել մատակարարի եւ Սպառողի իրավասու անձանց կողմից հաստատված`

ա) օպերատիվ խոսակցություններ վարելու իրավունք ունեցող աշխատակիցների ցուցակը,

բ) օպերատիվ խոսակցություններ վարելու եւ փոխանջատումներ կատարելու իրավունք ունեցող օպերատիվ անձնակազմի ցուցակը,

գ) սպառողի կողմից մատակարարի օպերատիվ ենթակայությանը սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների հանձնումը կատարվում է հետեւյալ ընթացակարգով,

դ) ամեն տարի մինչեւ նոյեմբերի 1-ը մատակարարը սպառողին է ներկայացնում իր օպերատիվ ենթակայությանը հանձնման ենթակա սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների ցանկը,

ե) ամեն տարի մինչեւ դեկտեմբերի 1-ը սպառողը մատակարարին է ներկայացնում վերջինիս ներկայացրած ցանկում ընդգրկված սարքավորումների միացման սխեմաները` նշելով սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների հարաչափերը: Սպառողի սարքավորումների եւ ՌՊԱ սարքվածքների հանձնումը մատակարարի օպերատիվ ենթակայությանը մինչեւ դեկտեմբերի 25-ը ձեւակերպվում է սպառողի իրավասու անձի եւ մատակարարի տեխնիկական ղեկավարի միջեւ կնքված համաձայնագրով, որը կցվում է Պայմանագրին եւ հանդիսանում է նրա անբաժանելի մասը: